ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1,հեռ.՝ (+374 11) 514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/61-4706 «01» 03 2022թ.

«ՂԱՀՐԱՄԱՆ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ
Մ. ՀԱՍԱՆՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՂԱՀՐԱՄԱՆ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ Ընկերության/ միջև 10.12.2021 թվականին կնքվել է «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/2-6» ծածկագրով գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, առանց ֆինանսական միջոցների, որի շրջանակներում Ընկերությունը ներկայացրել է պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնության ձևով:

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո Պայմանագրի 8.15 կետի համաձայն օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերությանը ներկայացվել է համաձայնագիր կնքելու, բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի, կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքի ձևով որակավորման և բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել նշված փաստաթղթերը՝ խախտելով պայմանագրով սահմանված պարտավորությունները:

Հաշվի առնելով, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի 8.15 կետի, Երևանի քաղաքապետարանը հրաժարվում է կնքված պայմանագրից, համարելով այն լուծված:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 3.2 և հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարները Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Գնումների վարչություն
կատ.՝ Գ. Մուրադյան
հեռ. 011 514 373